ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/02/2023

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 31 մայիսի 2023 թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Մարիամ Գալստյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2023 թվականի մայիսի 31-ին քննելով Ազգային ժողովի պատգամավոր Էդուարդ Աղաջանյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները 2022 թվականի մայիսի 31-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» հայտարարագրում ոչ ամբողջական և սխալ ներկայացնելու փաստերի առթիվ 2023 թվականի մայիսի 29-ի թիվ ՎԻՎ/02/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

Ի.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իրականացրել է Ազգային ժողովի պատգամավոր Էդուարդ Աղաջանյանի կողմից 2022 թվականի մայիսի 31-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» հայտարարագրի (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) ստուգում, որի արդյունքում պարզել է.

1) Հայտարարագրի «Արժեթղթեր և այլ ներդրումներ»(Բ.3) բաժնում տվյալներ չեն ներկայացվել «Էքսիփէդ» ՍՊ Ընկերության (գրանցման համար՝ ՀՎՀՀ՝ (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասնակցության վերաբերյալ:

2) Հայտարարագրի «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»(Դ.1) բաժնում տվյալներ չեն ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալում 50% բաժնեմասնակցության վերաբերյալ:

3) Հայտարարագրի «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը»(Դ.3) բաժնում տվյալներ չեն ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ: Մինչդեռ, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ Էդուարդ Աղաջանյանը 2014 թվականի սեպտեմբերի 17-ից հանդիսանում է Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասի սեփականատեր: Ընկերության՝ լուծարման գործընթացում գտնվելու, կամ գործունեության դադարման մասին տեղեկություններ միասնական գրանցամատյանում առկա չեն:

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է **գործող** առևտրային կազմակերպություն: **2021 թվականին ունեցել է 8,973,763.00 ՀՀ դրամ իրացման շրջանառություն, հարկվող շահույթի կամ վնասի վերաբերյալ տվյալներ առկա չեն:**

4) Հայտարարագրի «Տրանսպորտի միջոց»Բ.2 բաժնում չի ներկայացվել Էդուարդ Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող **YAMAHA YZF320-A մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցի** (նույնականացման համար՝) վերաբերյալ տվյալ, մինչդեռ, ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ նշված տրանսպորտային միջոցը 2021 թվականի մարտի 15-ից սեփականության իրավունքով պատկանում է Էդուարդ Աղաջանյանին:

5) Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[Գ.1.] բաժնի «Հաշվետու տարվա եկամուտներ»[Գ.1.1.] ենթաբաժնում, 2021 թվականին որպես **աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ հայտարարագրել է 2,101,740** ՀՀ դրամ եկամուտ: Մինչդեռ, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում վերջինս ստացել է **6,110,052** ՀՀ դրամ (առանց եկամտային հարկի՝ 1,819,435 ՀՀ դրամ և սոց. վճարի՝ 340,686 ՀՀ դրամ) եկամուտ *(հաշվետու ժամանակահատվածում պակաս հայտարարագրված եկամտի տարբերությունը կազմում է **4,008,312** ՀՀ դրամ)*:

6) Հայտարարագրի «Դրամական միջոցները»[Բ.6.] բաժնի «Բանկային հաշիվների մնացորդներ»[Բ.6.1.] ենթաբաժնում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հայտարարագրվել են **5,030,949** ՀՀ դրամ, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ **2,101,740** ՀՀ դրամ անկանխիկ դրամական միջոցներ, մինչդեռ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա են եղել **5,174,925.62 ՀՀ դրամ, 2.05 ԱՄՆ դոլար, 1.73 Եվրո**, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ **790,384.4 ՀՀ դրամ, 2.05 ԱՄՆ դոլար, 1.73 Եվրո** անկանխիկ դրամական միջոցների մնացորդներ *(2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավել հայտարարագրված դրամական մնացորդների տարբերությունը կազմում է **1,311,355.6 ՀՀ դրամ**)*:

7) ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Էդուարդ Աղաջանյանին, որպես վարկային գիծ տրամադրված 1,000,000 ՀՀ դրամ սահմանաչափով կրեդիտ քարտում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է եղել **856,148.22 ՀՀ դրամ,** իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 290,344.69 ՀՀ դրամ մնացորդ: **Ըստ այդմ, 2021 թվականի ընթացքում Էդուարդ Աղաջանյանի կողմից նշված վարկային գծի մնացորդից օգտագործվել է 565,803.53** (856,148.22-290,344.69) ՀՀ դրամ գումար: Մինչդեռ, Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[Գ.1.] բաժնում 2021 թվականի ընթացքում օգտագործված

565,803.53 ՀՀ դրամը որպես **ստացված փոխառություն (վարկ)՝ եկամուտ, չի հայտարարագրվել:**

1.2 Հանձնաժողովը 2023 թվականի մայիսի 18-ին Էդուարդ Աղաջանյանին է հասցեագրել թիվ 01/1195-2023 ծանուցումը՝ Հայտարարագրում հայտնաբերված վերոշարադրյալ անհամապատասխանությունների վերաբերյալ՝ հրավիրելով 2023 թվականի մայիսի 23-ին վերջինիս ներկայությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

1.3 2023 թվականի մայիսի 29-ին պատշաճ ծանուցված Էդուարդ Աղաջանյանի ներկայացուցչի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/03/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

Ազգային ժողովի պատգամավոր Էդուարդ Աղաջանյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա հանդես եկող (լիազորագիր՝ տրված 26.05.2023թ.) վերջինիս ներկայացուցիչ [illegible] թ., [illegible]g) 2023 թվականի մայիսի 29-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ընթացքում ներկայացրեց բացատրություններ առ այն, որ արձանագրված առերևույթ իրավախախտումը՝ PARVAZ GL 100CC մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցը չհայտարարագրելը, պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ 2014 թվականին Էդուարդ Աղաջանյանը ձեռք է բերել վերոնշյալ տրանսպորտային միջոցը 300 ԱՄՆ դոլարով, և հաշվի առնելով զուտ մաշվածությունը՝ 5 տարի առաջ նվիրել է եղբորը, ով էլ օգտագործել է այն որպես պահեստամաս:

Նշվածով պայմանավորված և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հավաստիության կանխավարկածը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նույնանման հանգամանքներով ձևավորված պրակտիկան (թիվ ՎԻՎ/05/2021 գործով, արարքը որպես նվազ նշանակություն է ունեցող որակվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրման ենթակա տվյալը՝ տրանսպորտային միջոցը՝ փաստացի չի պատկանել և

տիրապետվել հայտարարատուի կողմից) Հայտարարագրի «Տրանսպորտի միջոց»[բ.2.] բաժնում Էդուարդ Աղաջանյանին 2014 թվականից սեփականության իրավունքով պատկանող **PARVAZ GL 100CC մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցի** (նույնականացման համար՝ N2N***100Y9210669) վերաբերյալ տվյալ չներկայացնելու առնչությամբ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Հանձնաժողովը վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելիս, եկել է համապատասխան եզրահանգման:

1.4 Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 29-ի թիվ ՎԻՎ 02/23 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտումների հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ: Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 03/23 արձանագրությունը, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ ՎԻՎ 02/23 որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է Էդուարդ Աղաջանյանին:

1.5 Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2023 թվականի մայիսի 31-ին ժամը 15:00-ին, ինչի կապակցությամբ Էդուարդ Աղաջանյանը պատշաճ ծանուցվել է: Գործը քննվել է Էդուարդ Աղաջանյանի բացակայությամբ, գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացվել:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Էդուարդ Աղաջանյանի ներկայացուցիչ Մարիաննա Եղիազարյանը ՎԻՎ 03/23 արձանագրության կազմման ժամանակ ներկայացրել է բացատրություններ առ այն, որ արձանագրված առերևույթ իրավախախտումը՝ PARVAZ GL 100CC մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցը չհայտարարագրելը, պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ 2014 թվականին Էդուարդ Աղաջանյանը ձեռք է բերել այն 300 ԱՄՆ դոլարով, և հաշվի առնելով զուտ մաշվածությունը՝ 5 տարի առաջ նվիրել է եղբորը, ով էլ օգտագործել է այն որպես պահեստամաս:

Միաժամանակ մյուս առերևույթ իրավախախտումների կապակցությամբ ներկայացրել է նաև հետևյալ պարզաբանումները.

Էդուարդ Աղաջանյանը, աշխատանքային գերծանրաբեռնվածությունից ելնելով, հանձնարարել է իր օգնականին լրացնել հայտարարագրման ենթակա տվյալները և չի կարողացել հետևողական լինել իր օգնականի կողմից Հայտարարագրի պատշաճ լրացմանը: Օգնականը թիվ ՎԻՎ 03/2023 արձանագրության 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով արձանագրված առերևույթ իրավախախտումների վերաբերյալ լրացման ենթակա բաժիններում համապատասխան տվյալներ չի ներկայացրել՝ առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ Ընկերության՝ Էդուարդ Աղաջանյանին պատկանող բաժնեմասը, հանձնված է հավատարմագրային կառավարման, հետևաբար կարիք չկա բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալներ հայտարարագրել: Հանձնաժողովի անդամի հարցին ի պատասխան՝ ներկայացուցիչը հայտնեց, որ էդուարդ Աղաջանյանը տեղյակ է, որ Ընկերությունը հանդիսանում է գործող առևտրային կազմակերպություն և հարկեր է վճարում:

Արձանագրված 4-րդ առերևույթ իրավախախտման՝ **YAMAHA YZF320-A մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցը չհայտարարագրելու** վերաբերյալ հայտնեց, որ տվյալներ նշված տրանսպորտային միջոցի վերաբերյալ ներկայացվել են Հայտարարագրում, սակայն ծրագրային խնդրով պայմանավորված՝ տվյալները չեն արտացոլվել:

Արձանագրված 5-րդ առերևույթ իրավախախտման՝ եկամուտների անհամապատասխանության, վերաբերյալ հայտնեց, որ Էդուարդ Աղաջանյանը հաշվետու ժամանակահատվածում երկու տարբեր պաշտոններ է զբաղեցրել՝ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի և Ազգային ժողովի պատգամավորի, իսկ Հայտարարագրում որպես եկամուտ ներկայացվել են միայն Ազգային ժողովից ստացված աշխատավարձի վերաբերյալ տվյալներ, իսկ 6-րդ իրավախախտման վերաբերյալ հայտնեց, որ Հայտարարագրում որպես դրամական միջոցների մնացորդներ հայտարարագրված գումարը սխալ է մուտքագրվել՝ հիմք ընդունելով հեռախոսային Մոբայլ/Ինտերնետ բանկինգ ծառայության տվյալները, թյուրիմացաբար արտահանելով այլ ամսաթվի դրությամբ բանկային հաշվին առկա մնացորդների վերաբերյալ տվյալները, որտեղից էլ առաջացել է անհամապատասխանությունը:

Արձանագրված 7-րդ իրավախախտման՝ ստացված փոփառությունը որպես եկամուտ չհայտարարագրելու, վերաբերյալ հայտնեց, որ Էդուարդ Աղաջանյանին որպես վարկային

գիծ տրամադրված համապատասխան հաշվին անընդհատ գումարներ են մուտքագրվել և ելքագրվել և հնարավոր չի եղել վարկային գծի օգտագործված մասի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ներկայացնել:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/02/23 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում՝

3.1 Հայտարարագրի «Արժեթղթեր և այլ ներդրումներ»(Բ.3) բաժնում տվյալներ չեն ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասնակցության վերաբերյալ:

3.2 Հայտարարագրի «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»(Դ.1) բաժնում տվյալներ չեն ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալում 50% բաժնեմասնակցության վերաբերյալ:

3.3 Հայտարարագրի «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը»(Դ.3) բաժնում տվյալներ չեն ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ: Մինչդեռ, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ Էդուարդ Աղաջանյանը 2014 թվականի սեպտեմբերի 17-ից հանդիսանում է Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասի սեփականատեր: Ընկերության՝ լուծարման գործընթացում գտնվելու, կամ գործունեության դադարման մասին տեղեկություններ միասնական գրանցամատյանում առկա չեն:

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է **գործող** առևտրային կազմակերպություն: **2021 թվականին ունեցել է 8,973,763.00 ՀՀ դրամ իրացման շրջանառություն, հարկվող շահույթի կամ վնասի վերաբերյալ տվյալներ առկա չեն:**

Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա են ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

3.4 Հայտարարագրի «Տրանսպորտի միջոց»Բ.2. բաժնում չի ներկայացվել Էդուարդ Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող PARVAZ GL 100CC մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցի (նույնականացման համար՝ N2N***100Y9210669) վերաբերյալ տվյալ, մինչդեռ, ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ նշված տրանսպորտային միջոցը 2014 թվականի սեպտեմբերի 30-ից սեփականության իրավունքով պատկանում է Էդուարդ Աղաջանյանին: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3.5 Հայտարարագրի «Տրանսպորտի միջոց»Բ.2 բաժնում չի ներկայացվել Էդուարդ Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող YAMAHA YZF320-A մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցի (նույնականացման համար՝ [redacted], վերաբերյալ տվյալ, մինչդեռ, ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ նշված տրանսպորտային միջոցը 2021 թվականի մարտի 15-ից սեփականության իրավունքով պատկանում է Էդուարդ Աղաջանյանին: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3.6 Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»Գ.1. բաժնի «Հաշվետու տարվա եկամուտներ»Գ.1.1. ենթաբաժնում, 2021 թվականին որպես աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ հայտարարագրել է 2,101,740 ՀՀ դրամ եկամուտ: Մինչդեռ, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում վերջինս ստացել է 6,110,052 ՀՀ դրամ (առանց եկամտային հարկի՝ 1,819,435 ՀՀ դրամ և սոց. վճարի՝ 340,686 ՀՀ դրամ) եկամուտ (հաշվետու ժամանակահատվածում պակաս հայտարարագրված եկամտի տարբերությունը կազմում է 4,008,312 ՀՀ դրամ):

Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

3.7 Հայտարարագրի «Դրամական միջոցները»[Բ.6.] բաժնի «Բանկային հաշիվների մնացորդներ»[Բ.6.1.] ենթաբաժնում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հայտարարագրվել են **5,030,949** ՀՀ դրամ, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ **2,101,740** ՀՀ դրամ անկանխիկ դրամական միջոցներ, մինչդեռ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա են եղել **5,174,925.62 ՀՀ դրամ, 2.05 ԱՄՆ դոլար, 1.73 Եվրո**, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ **790,384.4 ՀՀ դրամ, 2.05 ԱՄՆ դոլար, 1.73 Եվրո** անկանխիկ դրամական միջոցների մնացորդներ *(2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավել հայտարարագրված դրամական մնացորդների տարբերությունը կազմում է **1,311,355.6 ՀՀ դրամ**)*: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

3.8 ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Էդուարդ Աղաջանյանին, որպես վարկային գիծ տրամադրված 1,000,000 ՀՀ դրամ սահմանաչափով կրեդիտ քարտում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է եղել **856,148.22 ՀՀ դրամ,** իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 290,344.69 ՀՀ դրամ մնացորդ: **Ըստ այդմ, 2021 թվականի ընթացքում Էդուարդ Աղաջանյանի կողմից նշված վարկային գծի մնացորդից օգտագործվել է 565,803.53** (856,148.22-290,344.69) ՀՀ դրամ գումար: Մինչդեռ, Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[Գ.1.] բաժնում 2021 թվականի ընթացքում օգտագործված **565,803.53 ՀՀ դրամը** որպես **ստացված փոխառություն (վարկ)՝ եկամուտ, չի հայտարարագրվել:** Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Ազգային Ժողովի պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսացել է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ բաժնային արժեթղթերը, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը), ինչպես նաև պարտքային արժեթղթերը (պարտատոմսը, չեկը, մուրհակը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթ, բացառությամբ բանկային վկայագրի): Նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման տեսակը, գինը (արժեքը), արժույթը, ձեռք բերելու տարին, ընկերության անվանումը, բաժնեմասնակցության տոկոսը, ումից է այն ձեռք բերվել՝ նշելով նրա անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտի միջոցը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային, երկաթուղային փոխադրամիջոցը: Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ը, կամ առավելագույն արագությունը

գերազանցում է 50 կմ/ժ-ը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները: Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են տրանսպորտի միջոցի դեպքում՝ տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռք բերելու տարին և եղանակը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հայտարարագրման ենթակա (...), տրանսպորտի միջոց, (...) ձեռք բերելու կամ օտարելու գործարքները՝ նշելով գույքի տեսակը, ձեռք բերելու կամ օտարելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա): Նույն հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:

4.5 Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ ***«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում*** նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու

հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.6 Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ **առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը**» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման, կամ հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը:

4.7 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ *աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները* (...), *ստացված փոխառությունները*, նույն հոդվածի 6.1-րդ մասի համաձայն՝ ստացված փոխառությունը հայտարարագրելիս նշվում են նաև տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի, (...) դրությամբ փոխառության մնացորդի չափը, ինչպես նաև ստացված փոխառության տոկոսադրույքը, նպատակային նշանակությունը:

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների

վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանվածը ամբողջական կերպով ներկայացված է նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ գույքի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, եկամտի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, շահերի դեպքում՝ կազմակերպության անվանումը, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը, հավատարմագրային կառավարման հանձնված լինելը և այլ տեղեկություններ:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել է հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակել այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում (2021 թվականի ապրիլի 9-ի թիվ ՎԻՎ/02/21 և 2021 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/01/21 որոշումներ):

Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով Էդուարդ Աղաջանյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ սխալ և ոչ ամբողջական տվյալները.

1) Հայտարարագրի «Արժեթղթեր և այլ ներդրումներ»[Բ.3] բաժնում տվյալներ չի ներկայացրել Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասնակցության վերաբերյալ: Նշված արարքով Էդուարդ Աղաջանյանը ***խախտել է*** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

2) Հայտարարագրի «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում տվյալներ չի ներկայացրել Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասնակցության վերաբերյալ: Նշված արարքով Էդուարդ Աղաջանյանը ***խախտել է*** Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3) Հայտարարագրի «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում գույքը հավատարմագրային կառավարման հանձնված լինելու վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել: Նշված արարքով Էդուարդ Աղաջանյանը ***խախտել է*** Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

4) ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ PARVAZ GL 100CC մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցը (նույնականացման համար՝ N2N***100Y9210669) 2014 թվականի սեպտեմբերի 30-ից սեփականության իրավունքով պատկանում է Էդուարդ Աղաջանյանին մինչդեռ, Հայտարարագրի «Տրանսպորտի միջոց»[Բ.2] բաժնում վերջինիս կողմից նշված տրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալ չի ներկայացվել:

5) ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ **YAMAHA YZF320-A մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցը** (նույնականացման համար՝ MH3RH12G000001219) 2021 թվականի մարտի 15-ից սեփականության իրավունքով պատկանում է Էդուարդ Աղաջանյանին, մինչդեռ, Հայտարարագրի «Տրանսպորտի միջոց»[Բ.2] բաժնում վերջինիս կողմից նշված տրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալ չի ներկայացվել: Նշված արարքով Էդուարդ

Աղաջանյանը ***խախտել է*** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

6) ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Էդուարդ Աղաջանյանը ստացել է **6,110,052** ՀՀ դրամ (առանց եկամտային հարկի՝ 1,819,435 ՀՀ դրամ և սոց. վճարի՝ 340,686 ՀՀ դրամ) եկամուտ, մինչդեռ, Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[Գ.1.] բաժնի «Հաշվետու տարվա եկամուտներ»[Գ.1.1.] ենթաբաժնում, 2021 թվականին որպես **աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ հայտարարագրել է 2,101,740** ՀՀ դրամ եկամուտ *(հաշվետու ժամանակահատվածում պակաս հայտարարագրված եկամտի տարբերությունը կազմում է **4,008,312** ՀՀ դրամ)*: Նշված արարքով վերջինս խախտել է Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի պահանջները, որի համաձայն՝ հայտարարագրման ենթակա է *աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները:* Տվյալ դեպքում հայտարարագրում ներկայացվել է սխալ տվյալ:

7) Հայտարարագրի «Դրամական միջոցները»[Բ.6.] բաժնի «Բանկային հաշիվների մնացորդներ»[Բ.6.1.] ենթաբաժնում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հայտարարագրվել են **5,030,949** ՀՀ դրամ, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ **2,101,740** ՀՀ դրամ անկանխիկ դրամական միջոցներ, մինչդեռ, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա են եղել **5,174,925.62 ՀՀ դրամ, 2.05 ԱՄՆ դոլար, 1.73 Եվրո**, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ **790,384.4 ՀՀ դրամ, 2.05 ԱՄՆ դոլար, 1.73 Եվրո** անկանխիկ դրամական միջոցների մնացորդներ *(2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավել հայտարարագրված դրամական մնացորդների տարբերությունը կազմում է **1,311,355.6 ՀՀ դրամ**)*: Նշված արարքով Էդուարդ Աղաջանյանը խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա): Հետևաբար, Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

8) ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Էդուարդ Աղաջանյանին, որպես վարկային գիծ տրամադրված 1,000,000 ՀՀ դրամ սահմանաչափով կրեդիտ քարտում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է եղել **856,148.22 ՀՀ դրամ,** իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 290,344.69 ՀՀ դրամ մնացորդ: **Ըստ այդմ, 2021 թվականի ընթացքում Էդուարդ Աղաջանյանի կողմից նշված վարկային գծի մնացորդից օգտագործվել է 565,803.53** (856,148.22-290,344.69) ՀՀ դրամ գումար: Մինչդեռ, Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[գ.1.] բաժնում 2021 թվականի ընթացքում օգտագործված **565,803.53 ՀՀ դրամը** որպես **ստացված փոխառություն (վարկ)՝ եկամուտ, չի հայտարարագրվել**: Նշված արարքով վերջինս խախտել է Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջները: Տվյալ դեպքում հայտարարագրում ներկայացվել է ոչ ամբողջական տվյալ:

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Էդուարդ Աղաջանյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքներ:

Անդրադառնալով Էդուարդ Աղաջանյանի ներկայացուցիչ Մարիաննա Եղիազարյանի ՎԻՎ 03/23 արձանագրության կազմման ժամանակ ներկայացրած բացատրություններին առ այն, որ Էդուարդ Աղաջանյանը, աշխատանքային գերծանրաբեռնվածությունից ելնելով, հանձնարարել է իր օգնականին լրացնել հայտարարագրման ենթակա տվյալները և չի կարողացել հետևողական լինել իր օգնականի կողմից Հայտարարագրի պատշաճ լրացմանը, Հանձնաժողովն այս առումով արձանագրում է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք հանդիսանում են ինչպես պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու, այնպես էլ տարեկան հայտարարագրերը ներկայացնելու ինքնուրույն պարտականություն կրող անձինք: Միաժամանակ վկայակոչված օրենսդրական դրույթով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրերը Օրենքի և

Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հաշվի առնելով օրենսդրությամբ սահմանված հայտարարատու անձանց անհատական պատասխանատվության ինստիտուտը, և այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը մի շարք օբյեկտիվ պատճառներով (տվալ պարագայում աշխատանքային գերծանրաբեռնվածությունից ելնելով) հնարավոր է անձամբ հայտարարագիրը չլրացնի, այլ կարող է այլ անձի օգնությամբ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը, այնուամենայնիվ հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրի ներկայացման փաստի ուժով հավաստում է ներկայացված տվյալների արժանահավատ և ամբողջական լինելը՝ անկախ այն հանգամանքից անձամբ է լրացրել հայտարարագիրը, թե այլ անձի միջոցով, հետևաբար հայտարարագրված տվյալների անհամապատասխանության պարագայում անձամբ է կրում բացասական հետևանքերի բեռը:

Հանձնաժողովը, անդրադառնալով առկա 1-ին, 2-րդ և 3-րդ իրավախախտումների, մասնավորապես՝ Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասնակցությունը որպես արժեթուղթ գույքի հայտարարագրում, որպես մասնակցություն առևտրային կազմակերպությունում, ինչպես նաև մասնակցությունը հավատարմագրային կառավարման հանձնելը շահերի հայտարարագրում չներկայացնելու վերաբերյալ Էդուարդ Աղաջանյանի ներկայացուցչի կողմից ներկայացված բացատրությանը, ներկայացնում է հետևյալ դիրքորոշումը.

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովն իր կողմից կայացված նախորդ որոշումներով գույքի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու հետ կապված նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձը **«Արժեթղթեր և այլ ներդրումներ»** բաժնի Բ.3.1. «Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» ենթաբաժնում չի հայտարարագրել իր բաժնեմասնակցությունը, սակայն գործում առկա փաստերի համաձայն հաստատվել է, որ առևտրային կազմակերպությունը ժամանակավորապես դադարեցված է (ՎԻՎ 04/2022):

Մեկ այլ գործով Հանձնաժողովը շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձը հայտարարագրի Դ.1. **«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»** բաժնում չի հայտարարագրել իր մասնակցությունը առևտրային կազմակերպությունում, սակայն գործում առկա փաստերի համաձայն հաստատվել է, որ առևտրային կազմակերպության գործունեությունը ***ժամանակավոր դադարեցված է*** (ՎԻՎ 05/22): Հանձնաժողովը գտել է, որ կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Մեկ այլ գործով Հանձնաժողովը նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ ***նույն հայտարարագրի*** **«Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ»** բաժնում ներկայացվել է **հայտարարատուի բաժնեմասնակցությունը** առևտրային կազմակերպությանը, սակայն **«Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում»** ենթաբաժնում չի ներկայացվել (ՎԻՎ/27/2022): Այս առումով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացված տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվել է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվել հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն որակվել է որպես նվազ նշանկություն ունեցող, ինչը «Վարչական

իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և բանավոր դիտողություն հայտարարելու հիմք է հանդիսացել:

Սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերով ներկայացված հանգամանքներից նախևառաջ այն առումով, որ առկա չէ հայտարարագրված տվյալ **հայտարարատուի՝ առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցության վերաբերյալ** «Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, հաջորդիվ այն առումով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է գործող առևտրային կազմակերպություն և 2021 թվականին ունեցել է 8,973,763.00 ՀՀ դրամ իրացման շրջանառություն:

Հայտարարագրի «Տրանսպորտի միջոց»[Բ.2.] բաժնում Էդուարդ Աղաջանյանին 2014 թվականից սեփականության իրավունքով պատկանող **PARVAZ GL 100CC մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցի** (նույնականացման համար՝ N2N***100Y9210669) վերաբերյալ տվյալ չներկայացնելու առնչությամբ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրման ենթակա տվյալը՝ տրանսպորտային միջոցը՝ փաստացի չի պատկանել և տիրապետվել հայտարարատուի կողմից վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելիս, եկել է համապատասխան եզրահանգման:

Անդրադառնալով **YAMAHA YZF320-A մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալ չներկայացնելու** առնչությամբ Էդուարդ Աղաջանյանի ներկայացուցիչ Մարիաննա Եղիազարյանի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ ներկայացրած բացատրություններին, առ այն որ նշված տրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալ ներկայացվել է Հայտարարագրում, սակայն ծրագրային խնդրով պայմանավորված՝ տվյալները չեն արտացոլվել, Հանձնաժողովն արձանագրում է, որ համապատասխան ծրագրային տեխնիկական խնդրի առնչությամբ Հանձնաժողովին դիմելու վերաբերյալ որևէ տվյալ առկա չէ: Բացի այդ, Հայտարարագրի հանձնումը կատարելուց առաջ անձը հնավորություն ունի

նախնական դիտման ռեժիմով, տեսանելի ձևով համակարգում հավաստիանալ տվյալներն արդյոք լրացված են ամբողջապես, և այնուհետև կատարել հանձնման գործողությունը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորման պահանջն է, որ Հայտարարագիրը պետք է ներառի հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող բոլոր տրանսպորտային միջոցները, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են տրանսպորտի միջոցի դեպքում՝ տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռք բերելու տարին և եղանակը: Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկատվությամբ 2021 թվականի մարտի 15-ից սեփականության իրավունքով Էդուարդ Աղաջանյանին պատկանող **YAMAHA YZF320-A մակնիշի մոտոցիկլ տեսակի տրանսպորտային միջոցի** վերաբերյալ նշված տվյալները ներկայացված չեն Էդուարդ Աղաջանյանի Հայտարարագրում:

Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[Գ.1.] բաժնի «Հաշվետու տարվա եկամուտներ»[Գ.1.1.] ենթաբաժնում, ***4,008,312*** *ՀՀ դրամի չափով պակաս հայտարարագրված եկամտի առնչությամբ վարույթի մասնակցի ներկայացուցիչը բացատրությամբ ներկայացրել է,* որ Էդուարդ Աղաջանյանը հաշվետու ժամանակահատվածում երկու տարբեր պաշտոններ է զբաղեցրել՝ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի և Ազգային ժողովի պատգամավորի, իսկ Հայտարարագրում որպես եկամուտ ներկայացվել են միայն Ազգային ժողովից ստացված աշխատավարձի վերաբերյալ տվյալներ: Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովը, ուսումնասիրել է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը, համաձայն որի՝ 2021 թվականի ընթացքում Էդուարդ Աղաջանյանը որպես եկամուտ ստացել է 3,033,093 ՀՀ դրամ Վարչապետի Աշխատակազմից և 5,537,080 ՀՀ դրամ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, հանրագումարը՝ 8,570,173 ՀՀ դրամ, որը եկամտային հարկի՝ 1,819,435 ՀՀ դրամ և սոցիալական վճարի՝ 340,686 ՀՀ դրամ նվազեցնելու հետո կազմում է **6,110,052** ՀՀ դրամ: Մինչդեռ, Էդուարդ Աղաջանյանը համապատասխան բաժնում որպես եկամուտ ներկայացրել է միայն ՀՀ Ազգային ժողովից որպես աշխատանքի վարձատրություն և դրան

հավասարեցված այլ վճարումներ ստացված 2,101,740 ՀՀ դրամ եկամտի վերաբերյալ տվյալ: Նշվածով պայմանավորված *հաշվետու ժամանակահատվածում պակաս հայտարարագրված եկամտի տարբերությունը կազմում է* ***4,008,312*** *ՀՀ դրամ*: Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարագրում պետք է ներառվեն 2021 թվականի ընթացքում ստացված բոլոր եկամուտները և ***դրանց ստացման աղբյուրները***: Հետևաբար տարբեր աղբյուներից ստացված եկամուտները, անկախ նրանից, որ դրանք նույն տեսակի են (տվյալ դեպքում աշխատավարձ և դրան հավասարեցված վճար), Օրենքի իմաստով ենթակա են հայտարարագրման՝ առանձին-առանձին: Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Էդուարդ Աղաջանյանի կողմից չհայտարարագրված եկամտի ընդհանուր չափը կազմում է 4,008,312 ՀՀ դրամ, և այն գերազանցում է պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը:

Հանձնաժողովի՝ 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/08/2021, 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/11/2021 որոշումներում նվազ նշանակության են որակվել այն դեպքերը, երբ պաշտոնատար անձի չհայտարարագրած եկամուտը չի գերազանցել նրա պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձը: Էական է գնահատվել նաև այն, որ հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտը ստացվել է մեկ աղբյուրից:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով խախտումը կատարվել է այնպիսի փաստական հանգամանքների համադրությամբ, որոնք նույնական չեն նախորդող վարչական ակտերում առկա փաստական հանգամանքների հետ և Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

Անդրադառնալով *2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ* ***1,311,355.6 ՀՀ դրամի չափով*** *ավել հայտարարագրված դրամական մնացորդների տարբերության վերաբերյալ վարույթի մասնակցի ներկայացուցչի բացատրությանն առ այն, որ* Հայտարարագրում որպես դրամական միջոցների մնացորդներ հայտարարագրված գումարը սխալ է մուտքագրվել՝ հիմք ընդունելով հեռախոսային Մոբայլ/Ինտերնետ բանկինգ ծառայության տվյալները, թյուրիմացաբար արտահանելով այլ ամսաթվի դրությամբ բանկային հաշվին առկա

մնացորդների վերաբերյալ տվյալները, որտեղից էլ առաջացել է անհամապատասխանությունը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը. Էդուարդ Աղաջանյանի կողմից 2023 թվականի փետրվարի 2-ին Մ-408-2023 գրությամբ ներկայացված պարզաբանմանը կից ներկայացվել են 2018-2022 թվականներն ընկած ժամանակահատվածի՝ ***իր անվամբ սպասարկվող հաշիվների բանկային քաղվածքները***, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «[illegible]» ՓԲԸ-ի՝ Էդուարդ Աղաջանյանի անվամբ սպասարկվող, ՀՀ դրամով առկա [illegible]1 բանկային հաշվին ***2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա են եղել 5,174,925.62 ՀՀ դրամ, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 790,384.4 ՀՀ դրամ անկանխիկ դրամական միջոցների մնացորդներ***:

Հանձնաժողովն իր կողմից կայացված 2022 թվականի մայիսի 27-ի ՎԻՎ/23/22 որոշմամբ գույքի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու հետ կապված նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձի բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դրամական միջոցների մնացորդն արդեն իսկ հայտարարագրվել է «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում որպես հայտարարագրման ենթակա եկամուտ, որպիսի պարագայում ներկայացվել են եկամտի ստացման տեսակը, աղբյուրը, չափը: Նման պայմաններում Հանձնաժողովը էական է համարել այն, որ հայտարարատուի կողմից ներկայացվել են այնպիսի ապացույցներ, որոնցով հավաստվում է չհայտարարագրված դրամական միջոցների աղբյուրների օրինականությունը՝ ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ թեև Էդուարդ Աղաջանյանի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային հաշիվների մնացորդի վերաբերյալ տվյալ է ներկայացվել 2,101,740 ՀՀ դրամի չափով (ըստ հայտարարագրի ծագման աղբյուրը աշխատավարձ) և նույնքան՝ 2,101,740 ՀՀ դրամի չափով գումարի վերաբերյալ տվյալ է

ներկայացվել Հայտարարագրի «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում՝ որպես ստացված աշխատավարձ, սակայն սույն վարույթի շրջանակներում չեն ներկայացվել վերոնշյալ դրամական միջոցների մնացորդների տարբերությունը հիմնավորող փաստաթղթեր:

Նշված հանգամանքները մատնանշում են, որ Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

Ինչ վերաբերում է ստացված փոփառությունը որպես եկամուտ չհայտարարագրելու վերաբերյալ Էդուարդ Աղաջանյանի ներկայացուցչի բացատրությանն առ այն, որ Էդուարդ Աղաջանյանին որպես վարկային գիծ տրամադրված համապատասխան հաշվին անընդհատ գումարներ են մուտքագրվել և ելքագրվել, և հնարավոր չի եղել վարկային գծի օգտագործված մասի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ներկայացնել, Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Էդուարդ Աղաջանյանին, որպես վարկային գիծ տրամադրված 1,000,000 ՀՀ դրամ սահմանաչափով կրեդիտ քարտում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է եղել **856,148.22 ՀՀ դրամ,** իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 290,344.69 ՀՀ դրամ մնացորդ: **Ըստ այդմ, 2021 թվականի ընթացքում Էդուարդ Աղաջանյանի կողմից նշված վարկային գծի մնացորդից օգտագործվել է 565,803.53** (856,148.22-290,344.69) ՀՀ դրամ գումար: Մինչդեռ, Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[Գ.1.] բաժնում 2021 թվականի ընթացքում օգտագործված **565,803.53 ՀՀ դրամը** որպես **ստացված փոխառություն (վարկ)՝ եկամուտ, չի հայտարարագրվել:** Նշված արարքով վերջինս խախտել է Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջները: Տվյալ դեպքում հայտարարագրում ներկայացվել է ոչ ամբողջական տվյալ:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի

առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, այլ առկա է Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք այն, որ ***հայտարարատուն ընդունել է հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրում սխալ և ոչ ամբողջական ներկայացնելու արարքում իր անզգուշությունը***, տվյալ պարագայում աշխատանքային գերծանրաբեռնվածությունից ելնելով՝ անձամբ չլրացնելու, այլ իր օգնականի կողմից Հայտարարագրի պատշաճ լրացումն ապահովելու հարցում հետևողականություն չդրսևորելու առումով:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» հայտարարագրում անզգուշությամբ սխալ և ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար Էդուարդ Աղաջանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդուարդ Աղաջանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Էդուարդ Աղաջանյանին տրամադրել եռօրյա ժամկետ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**